

**Համաձայնեցված է**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Վ. Գաբրիելյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ  
Գ. Խաչատրյան**

14 հունվարի 2011 թ. N 4

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 4**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՉ  
ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ,  
ԿԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՎՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

1. Մինչև 01.01.2011թ. գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվական, ՀՕ-155) 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, ՀՀ ԿԱ ՀՊԾ 02.04.2004թ. N 1-05/7-Ն հրամանով հաստատված «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 9.2 կետի համաձայն ԱԱՀ վճարող համարվող ռեզիդենտը յուրաքանչյուր տարվա արդյունքներով (հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ) իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում է սահմանված ձևով շահութահարկի հաշվարկ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, իսկ ամբողջ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարվող ռեզիդենտը՝ միայն սահմանված ձևով շահութահարկի պարզեցված հաշվարկ:

Շահութահարկի հաշվարկը չեն լրացնում (և չեն ներկայացնում)՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված ռեզիդենտները (եթե հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված ու այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը), ոչ առևտրային կազմակերպությունները (եթե ստացված միջոցները բացառապես նշված օրենքի 8-րդ հոդվածի համաձայն եկամուտ չեն համարվում) և միայն շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող ռեզիդենտները:

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (8 դեկտեմբերի 2010 թվական, ՀՕ-189-Ն՝ ուժի մեջ է 01.01.2011թ-ից) 3-րդ հոդվածի համաձայն (որով վերաշարադրվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը ամբողջությամբ) շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմինն յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ), ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկներ, իսկ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունները՝ շահութահարկի պարզեցված հաշվարկներ:

2. Մինչև 01.01.2011թ. գործող խմբագրությամբ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի (7 հուլիսի 1998 թվական, ՀՕ-236) 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ՀՀ ՀՏ 30.12.1998թ. N 01/60 հրամանով հաստատված «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ» հրահանգչական նամակի 1.3 կետի համաձայն հաստատագրված վճար վճարողները օրենսդրությամբ սահմանված

կարգով և ժամկետներում հարկային տեսչության մարմիններին են ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Բացառապես հաստատագրված վճար վճարողները այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում հարկային տեսչության մարմին շահութահարկի հաշվարկներ չեն ներկայացնում:

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (8 դեկտեմբերի 2010 թվական, ՀՕ-194-Ն` ուժի մեջ է 01.01.2011թ-ից) 2-րդ հոդվածի համաձայն (որով փոփոխվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը) հաստատագրված վճար վճարողները (այդ թվում` բացառապես հաստատագրված վճար վճարողները` այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում) հարկային տեսչության մարմիններին չեն ներկայացնում միայն հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

3. Մինչև 01.01.2011թ. գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվական, ՀՕ-155) 60-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ ՀՏ 04.03.1999թ. N 01/13 հրամանով հաստատված «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 11.2 կետի համաձայն հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 15-ից ոչ ուշ հարկային տեսչության մարմիններին է ներկայացնում տարեկան եկամուտների մասին հայտարարագիր, ինչպես նաև կամայական (իր կողմից որոշված) ձևով հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտները տարեկան եկամուտների մասին հայտարարագիր և իր գործունեության մասին կամայական ձևով հաշվետվություն չեն ներկայացնում միայն այն դեպքերում, երբ ՀՀ տարածքում ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտները հայաստանյան աղբյուրներից եկամուտներ են ստացել բացառապես արտաքին տնտեսական գործունեությունից և (կամ) ստացել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից շահութահարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և պետական բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալների վրա:

Հաշվետու տարում ԱԱՀ վճարող համարվող ոչ ռեզիդենտի ՀՀ ստորաբաժանումը հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 15-ից ոչ ուշ հարկային տեսչության մարմին է ներկայացնում նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (8 դեկտեմբերի 2010 թվական, ՀՕ-189-Ն` ուժի մեջ է 01.01.2011թ-ից) 7-րդ հոդվածի համաձայն (որով վերաշարադրվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը ամբողջությամբ) ոչ ռեզիդենտը հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 15-ից ոչ ուշ հարկային տեսչության մարմիններ է ներկայացնում միայն վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևով տարեկան եկամուտների մասին հաշվարկ, որտեղ ներառվում են հայաստանյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները: Ընդ որում` նշված օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները (որոնք վերաբերում են միայն ոչ ռեզիդենտներին) կիրառվում են 01.01.2011թ-ից հետո հաշվետու ժամանակաշրջանների համար:

Ստեղծված իրավիճակում տարաբնույթ են ընկալվում «Շահութահարկի մասին» և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքների նշված դրույթները` 2010թ. հաշվետու տարվա համար 01.01.2011թ-ից հետո հարկային տեսչության մարմիններին ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկների և ֆինանսական հաշվետվությունների, իսկ ոչ ռեզիդենտների կողմից` տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի, իր գործունեության մասին հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման առումով:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1) Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից 2010թ. հաշվետու տարվա համար 01.01.2011թ-ից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով ֆինանսական հաշվետվություններ (հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) հարկային տեսչության մարմիններ չեն ներկայացվում:

2) Շահութահարկ և (կամ) հաստատագրված վճար վճարող հանդիսացող ռեզիդենտների (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ /հիմնականում/ զբաղված կազմակերպությունների, ոչ առևտրային կազմակերպությունների /բացառությամբ՝ շահութահարկ վճարող չհանդիսացող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների/) կողմից 2010թ. համար 01.01.2011թ-ից հետո իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմիններին ներկայացվում են շահութահարկի հաշվարկներ, իսկ 2010թ. հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների կողմից՝ շահութահարկի պարզեցված հաշվարկներ:

Շահութահարկի հաշվարկի և շահութահարկի պարզեցված հաշվարկի ձևերը հաստատված են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.09.2009թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2004 թվականի ապրիլի 2-ի N 1-05/7-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2682-Ն հրամանով:

3) 2010թ. հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտների կողմից 2010թ. համար 01.01.2011թ-ից հետո հարկային տեսչության մարմիններին ներկայացվում են տարեկան եկամուտների մասին հայտարարագրեր և կամայական (իր կողմից որոշված) ձևով հաշվետվություն իր գործունեության մասին: 2010թ. ընթացքում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտները տարեկան եկամուտների մասին հայտարարագիր և իր գործունեության մասին կամայական ձևով հաշվետվություն չեն ներկայացնում միայն այն դեպքերում, երբ ՀՀ տարածքում ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտները հայաստանյան աղբյուրներից եկամուտներ են ստացել բացառապես արտաքին տնտեսական գործունեությունից և (կամ) ստացել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից շահութահարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և պետական բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալների վրա:

Ոչ ռեզիդենտների տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 21.06.2004թ. «Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1999 թվականի մարտի 4-ի N 01/16 հրամանում փոփոխություններ և լրացումներ ու Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1999 թվականի հունվարի 27-ի N 01/7 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 1-05/9-Ն հրամանով: